

Կ Ր Թ Ա Ր Ա Ն

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ



Խմբագրութեամբ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՍԱՆՈՒՅ

ԱՐՏՕՆԱՏԷՐ

Պ. Ա Տ Ր Ո Ւ Ն Ի



ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ — ԹԻԻ 9

1888 ՍԵՊՏԵՄԲԵՐ



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Աքաղաղն եւ վառեակ — Առակ (Գ. Վ.). — Տանս շուր-
ջը — Գ. (***). — Ճաշեյու մասին (Բ.). — Ճաքոն (Լ.
Տ.). — Լուսին եւ իւր ազդեցութիւնն հիւանդութեանց վրայ
— շար. եւ վերջ (Գ.). — Այլ եւ այլք :



Կ. Պ Օ Լ Ի Ս

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



1888

5 11 7 11 6 7 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

11 11 11 11 11 11 11 11 11 11

THE HISTORY OF THE

REIGN OF

CHARLES THE FIRST

BY

JOHN BURNET

OF THE UNIVERSITY OF OXFORD

IN TWO VOLUMES

LONDON

Printed by J. Streater, in Strand

1679

THE HISTORY OF THE

REIGN OF

CHARLES THE FIRST

BY

JOHN BURNET

OF THE UNIVERSITY OF OXFORD

IN TWO VOLUMES

LONDON

Printed by J. Streater, in Strand

1679

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Մայրաքաղաքիս համար տարեկան կանխիկ դշ .	12
Գաւառաց » » » » »	15

Մէն մի թերթն ձեռքէ կը վաճառուի ի Պոլիս, Պահճէ
գաբու, ջրավաճառ, Պօղոս եւ Յակոբ աղայից խա-
նութները, նաեւ գրավաճառ եւ թղթավաճառ Պ.
Զարեհ Թորոսեանի քով, ի գին փրյ. 50

Գաւառներէն դրամի տեղ նամակադրոշմ եւս կ'ընդունուի :

Նամակ կամ ո եւ է զրուրիւն պէտք է ուղղել առ
Խմբագրութիւն Կրթարան Հանդիսի, Պերպերեան տպարան,
Էսկի Զապքի ճատտեսի, քիւ 63, ի Պոլիս :

معارف نظارتِ جلیله سنک ۱۹۹ نومرونی رخصتنامه سیله طبع اولمشدر

Կ Ր Թ Ա Ր Ա Ն

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ

ԳՐԱԿԱՆ , ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՏԱՐԻ Ա .

1888

ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԱՔԱՂԱՂՆ ԵՒ ՎԱԹԵԱԿ

Ա Ռ Ա Կ

Գարնան օրեր մի հետ վառեակ ,
 Կենաց գաղտնեաց դեռ անգիտակ ,
 Որք իւր մօրմէն , ծանօթ չէր հայր ,
 Հաւնոցի մը քով ժուռ կուգայր :
 Նոյն շինուածին տէր եւ իշխան՝
 Աքաղաղ մի մեծ տեսաւ զայն .
 Փայլուն փետրովք զարդարուած էր ,
 Եւ իւր շուրջը շատ մը հաւեր :
 Աքաղաղն քաղցրիկ ձայնով
 Կոչեց խոհուն վառեակն իւր քով .
 — « Ի՞նչ մըտածես , որդեակ սիրուն ,
 Ըսաւ աքլորն մեր հետ հաւուն .
 « Աստուած գըլծած ողորմած է
 « Ըզբեզ ձրգած չէ երեսէ .
 « Ե՛կ իմ քովըս , սիրեմ ըզբեզ .
 « Քեզ հշմարիտ լինիմ հայր ես .

- « Ե՛կ քեզ անոյշ հունտեր կուտամ .
 « Ըզքեզ գրկել ե՛կ մի անգամ :
 « Անսա՛, խեղճուկ , դու իմ խօսքիս .
 « Մեր բարուց շատ շուտ կը վարժուիս .
 « Կ՛անցնի արդի նիհարութիւն ,
 « Եւ դու լինիս գիրուկ լեցուն :
 « Այս բազմութիւն տե՛ս դու այսքան
 « Ես կերակքեմ զայս ամեհայն .
 « Քո գալով մի բան չը պակսիր .
 « Ե՛կ , որդեակ , ե՛կ , հաւնոց մըտի՛ր : » —
 — « Երբե՛ք , ըսաւ երկամեայն մեր ,
 « Զ՛ընդունիմ բնաւ քո հրաւէր .
 « Դիտեմ պետ ես միանեծան ,
 « Դու կերակրես , գիտեմ , զիամայն ,
 « Կանխաւ լինիմ շընորհակալ ,
 « Այլ չեմ ուզեր խրատուցդ անսալ :
 « Արժան դատեմ ապրիլ արձակ ,
 « Թէպէտեւ կեամ աղքատ տընանկ .
 « Քան թէ ապրիլ յոյլ անվաստակ ,
 « Հեծել ցըման քո ձեռաց տակ : »

Ականջ խօսի հացկատակաց ,
 Վազեն կ՛երթան ուր գտնեն հաց ,
 Քծնին քըսուին , տիտղոսօք բիւր
 Կը մըկրտեն հարուստ պանդոյր :
 Ծուլութիւնն է որ վարէ զձեզ
 Ընտրել այս կեանք ըստրկապէս .
 Մէր քաջարի տեսէք վառեակ
 Եւ անասունք՝ ձեզ օրինակ :



Տ Ա Ն Ս Շ ՈՒՐ Զ Ը

Գ.

Այն խուցին մէջ, ուր այնքան քաղցր յիշատակօք ներշնչուեցայ և յուսով լեցուեցայ, այժմ յանկողնի կը տառապիմ և կը հեծեմ յուսաբեկ տենդն կը կրծէ սիրտս, կը հիւժէ մարմինս համակ: Թերեհաւատ Իպոկրատի վարդապետութեան մասին համբերութեամբ կուլ կուտամ Եսկիւլապի աշակերտին պատուիրած դեղերն որոց կատարելիք դերի մասին ինքն եւս ինձ չափ թերեհաւատ է: Տքուն և քրրոնաթոր կը հսկեմ գիշերն ողջոյն կամ լաւ եւս է ըսել կը սպասեմ անձնուիրաբար կենացս թատերախաղի վախճանին: Մորիէնս չչնորհեր ծանրացեալ արտեւանացս այն կազդուրիչ քունն, որ սննդեան հետ համարժէք է կենաց պահպանման համար: Անքուն և անսնունդ ի՞նչ պիտի ըլլայ վախճանս: Ուսարն՝ որ կ'ընդհատէ պահ մը ամէն կենդանական շարժումն, եւս առաւել կը ծանրացնէ տագնապներս և տենդս կը հասնի իւր գագաթնակիտին: Կանթեղին աղօտ լոյսն գոգցես կը խաւարի աչացս, և գիշերային պահնորդաց բրաց ձայնն անլսելի կը լինի...

Կը բացուի նոյն հետայն սենեկիս դուռն՝ ընդ որ երեք դաժանատեսիլ կոյսեր կը մտնեն ներս՝ խուզարկու ակնարկ մը ձգելով սենեկիս մէջ ի խնդիր իրենց որսոյն: Երկի՛նք, անգուլթ Պարկայք են նոքա՝ որք հատու մկրատն ի ձեռին յամր առ իս կը յառաջեն: Սոսկումն կը պաշարէ զիս. ի դուր կը սպառնամ նոցա, անյազդողդ են. ի դուր կ'աղաղակեմ « հեռի՛ յինէն, Պարկայք, հեռի՛. կենաց դարձտին մէջ ցարդ միայն դառն պտուղներ ճաշակեցի, թոյլ տուք ինձ քաղցր պտղոց ճաշակն եւս առնուլ և յետ այնորիկ կատարեցէք ձեր պաշտօնն առ իս »: աւա՛ղ, անկարեկիր են, Պարկայք, անկարեկիր մատաղ տիոցս: Հեռի՛ յինէն, կը կրկնեմ բարձրացնելով եւս առաւել ձայնս, հեռի՛ յինէն,

փոխանակ իմ գնացէ՛ք դուք կտրել այն սրտից թելերն որոց անյուսուածիւն , մոլութիւն և անխղճութիւն տիրած են . օգնութիւն , օգնութիւն . . . :

Ի լուր վերջին աղաղակացս կը բացուի յանկարծ սենեկիս ձեղունն , երկթեւեան հրեշտակ մ'է որ ունի ի գլուխ թեւաւոր թաղակ մը և ի ձեռին գաւազան մը ընդ որով կը փարին կրկին օձեր և իջնելով կուգայ բազմիւ հուպ առ իս : Կը դողան Պարկայք , զկայ կ'առնուն , և տակաւ առ տակաւ կը սկսին նահանջել և կ'անհետին ի տես անակնկալ պաշտպանիս : « Ո՛վ ես դու , ազատարարդ եմ , կը գոչեմ , որ կարող ես ի փախուստ խուճապեցնել զՊարկայս » : « Ես եմ Հերմէս , կը պատասխանէ , պատգամաւորն Դիոսի՛ որում տուեալ է փրկել մարդկութիւնն հիւանդութիւներէ և վտանգներէ : » Կ'ըսէ և իւր գլխից գաւազանն դպցնելով ինձ՝ կը սլանայ և կ'աներեւութանայ՝ առանց թողլոյ ինձ ժամանակ յայտնելու նմա շնորհակալիքս ի նշան իւր ընձեռած պաշտպանութեան . կը զարթնում . . . ո՛վ գիշեր յոգնատխուր . . . ո՛վ երազ սոսկատեսիլ . . . : Այլ կը փարատի տակաւ խաւարն և ընդ նմա կը ցնդին ցնորք : Այդ վարդամասն կը բանայ լուսոյ դռներն . կը ծագի ընդ հուպ արեգակն և տկար աչկունքս կ'ողջունեն նորա կենսատու ճառագայթներն թերեւ լըս վերջին անգամ մ'ես : Ի՞նչ կը բերես ինձ , ո՛վ աստղ առաւօտու , դափնեա՞յ պսակ թէ նոճեայ . . . :

Կը զգամ սակայն նոր զօրութիւն մը տուեալ գոգցես այն դիւթական գաւազանաւ՝ զոր Հերմէս հպեցոյց ինձ : Կը յառնեմ և այդ շարժումն իսկ կը ընու զիս յուսով . կը յուսամ այժմ , կը յուսայ ինձ հետ Եսկիւլապի աշակերտն : Որպէս թռչուն որ վանդակի մէջ յետ ընդ երկար բանտարկութեան՝ կը խայտայ և կը ձուռողէ բիւր թռիչներ առնելով , երբ ազատ արձակուի . նոյնպէս և ես , յետ հնգետասան այգուց , երբ կը բանամ սենեկիս պատուհանն և անտի կը դիտեմ բնութեան գեղեցկութիւնն , անպատում ուրախութիւն մը կը տիրէ սրտիս . յոյսն կը վերածնի յիս :

Կը նշմարեմ պատուհանէս հսկայ սպիտակ չէնք մը որ

գերթ դղեակ կը բարձրանայ և կը զլանայ ինձ ամրան այս տաք եղանակին՝ հիւսիսոյ կենսատու զով գեփուռն։ Ա՛հ, կը յիշեմ այդ շէնքի նախկին վիճակն, կը յիշեմ այն խոնարհ յարկն ուր ուսան և ուսուցին Իզմիրլեաններ, Գուրգէններ, Սեթեաններ։ Չ'ունէր վաղեմի շէնքն այս արտաքին փայլ զոր ունի այժմեանն, այլ ներքնոյն ո՞վ կրնար մրցիլ։ Արդարեւ էր Թարգմանչաց Վարժարան հանգոյն այնմ զոր հիմնեցին Սահակ և Մեսրոպ Ի Ե. դարուն։ Թարգմանչաց Վարժարան հասոյց և պարգեւեց Ազգին հարիւրաւոր անհատներ որք գրաւեցին և կը դրաւեն առաջնակարգ դիրքեր ընկերութեան մէջ։ Ընծայեց Ազգին պատրիարքներ, իրաւագէտներ, բժիշկներ, դաստիարակներ և խորհրդականներ։ Այնքան յառաջդիմութիւն այն վաղափուլ շէնքին մէջ, այլ է՞ր զարդիս այս վիճակ անկեալ։ Չեմ մոռնար այն օրն յորում վարժարանին հիմունք ի նորոյ կը դրուէին և կ'օրհնուէին անմահ Վարժապետեանի մեղրածորան շրթներէն։ Ետ հանդիսին մինչ բազմաշխատ կառավարչին աջն սեղմելով կը մաղթէի որ շէնքին արտաքին տեսքն համապատասխանէր ներքնոյն, հեզնեց դաստիարակն ինձ և ես ցնցեցի գլուխս։ Կանգնեցաւ շէնքն և ներքինն մնաց լերկ և դատարկ բարոյապէս և նիւթապէս։

Կիրքն հետզհետէ կը պառակտէր արմինն ազգասէր և յառաջադիմասէր սիրտերն։ Վարժարանն կը գլորէր անդունդէ յանդունդ, այս պարագայից մէջ երազատես սուտ մարգարէ մը օգուտ կ'ուզէ քաղել, երազին մէջ կը պատրաստէ ուսուցիչ ծրագիրներ, վայելչագիր կանոնագրութիւններ և անձնուիրական վերտառութիւններ և կը ստանայ վարժարանըն րեփի դրութեամբ շահագործելու մենաշնորհն, այլ այս ամէնն, ինչպէս յիշեցի, երազին մէջ։ Վարագոյրն կը փառատի, երազն կը վերջանայ և երազատես պարոնն կը գըտնուի սոսկալի իրականութեան մը հանդէպ։ Կը միանայ երիտասարդութիւնն, լսել կուտայ իւր վեղօն, և մեր մարգարէին բոլոր գուշակութիւնք ի դերեւ կ'ենէն։ Այո՛, կը յաղթանակէ երիտասարդութիւնն որ ունի հաստատամտութիւն

ի նշանաբան ուր կը փշրին բոլոր քսութիւնք և դաւք ի մեծ խայտառակութիւն երազատեսին որ ազատ է որոճալ իւր երազիւք, և ուղտաքաղս և փղաքաղս ստեղծանել (bâtir des châteaux en Espagne): Երկնից մխիթարութիւնն կը հայցեմ իւր դառն կորստեան համար. աղօթեցիք վասն նորա (un des profonds):

*
* *

ՃԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԲԺՇԿԻ ՄԸ ԽՐԱՏՆԵՐԸ

Ինչպէս նախորդ յօդուածով մը բացատրեցինք ծարաւն յաղեցնելու եղանակն, աւելորդ չեմք համարիր ճաշելու մասին եւս ցոյց տալ աստ առողջապահական մի քանի կանոններ, որոց պարտ է հետեւիլ եթէ կ'ուզէք որ սնունդն օգտակար լինի ձեզ:

Ճաշեցէք միշտ, եթէ կարելի է, զուարթ մարդոց հետ: Խնդալն իբր բնազդական պարզ շարժում մը կը նկատուի միշտ. սխալ է այս. ամենակարեւոր պաշտօններէն մին կը կազմէ այն, ոչ թէ միայն միտքերը բարձրացնելով, այլ և ջիղերը պնդելով, մաղձն ի բաց վանելով, արեան կենդանացուցիչ շրջան մը հաստատելով և մարսողութեան օգնելով. ապա՛ զուարթութիւն պահեցէք միշտ ձեր սեղանին վրայ: Սեղան մի՛ նստիք երբեք երբ բարկացած էք. նոյն միջոցին ինչ որ ուտէք լաւ չթուիր ձեզ, և ձեր մարսողութիւնը կը խանգարի. սպասեցէք ձեր արեան կատարեալ հանդարտութեան: Սեղանի վրայ զգուշացէք ամէն գրգռիչ վիճաբանութիւններէ և բանականութիւններէ. կին մը, օրինակի համար, որ այն վայրկեանը կ'ընտրէ իւր ամուսնոյն և զաւակաց հետ վէճ մը յարուցանելու, մաղձալից կ'ընէ զանոնք և իւր ան-

ձըն իսկ կը կանխապատրաստէ լեարդային հիւանդութեան մը: Վաղեմի հեղինակ մը կ'ըսէ. « Վիճաբանութիւնն ճաշի ժամանակ այն ազդեցութիւնը կրնայ ունենալ ստամոքսին վրայ ինչ որ ասեղնալից կծիկ մը պիտի ընէր թէ կ'ընուած լինէր »:

Ճաշէն անմիջապէս վերջն աշխատանքը կը խանդարէ մարսողութիւնն: Բազումք հակառակ կարծիք ունին և կը սխալին, զի մարսողութեան կարեւոր պաշտօնի կատարումն հանգիստ կը պահանջէ: Տեսէք անասունները. ուտելէ վերջն անմիջապէս կը պառկին և բնազդումն է միշտ որ կը վարէ զնոսա իրենց հարկաւոր եղածը կատարելու: Ես չեմ խրատեր սակայն որ նոցա պէս մեք եւս պարտիմք պառկիլ, այլ կը խրատեմ նմանիլ անոնց՝ սեղանէն ելնելէ յետոյ դռնէ ժամ մը հանգիստ առնելով հեռի գրական կամ ո և է աշխատութենէ: Մարզանքը ճաշէն առաջ մանաւանդ յոյժ յարմարագոյն է ասորժակը գրգռելու, այլ կը կրկնեմ թէ պէտք է խուսափիլ անտի երբ ստամոքսը կերակրօք ծանրաբեռեալ է:

Ճաշերնիդ վերջացուցէք կտոր մը հացի կեղեւ ուտելով, որ մարսողութեան կ'օգնէ և միանգամայն կը մաքրէ ակուաներն:

Մի՛ ուտէք երբեք ինչ որ հաճելի չէ ձեզ. մեք եւս ունիմք անասնոց բնազդումն, և կը մերժենք ինչ որ մեր ստամոքսին ախորժելի չթուիր: Յանիրաւի է ուրեմն մանուկ մը լաւ մեծցնելու պատճառանօք ստիպել զնա որ ամէն ինչ ուտելու վարժուի:

Եթէ տկարակազմ էք, կերէք երբ անօթութիւն զգայք, այսինքն յաճախ, այլ փոքրիկ քանակութեամբ. յամրաբար կերէք և լաւ ծամեցէք:

Գալով ըմպելեաց, ճաշի միջոցին պէտք է քիչ խմել թէ շատ: Արբեցողք ինձ պիտի պատասխանեն թէ պէտք է քիչ ուտել և շատ խմել. իսկ որովայնապարարք, փորձառու մարդիկ, հակառակը պիտի պնդեն թէ պէտք է քիչ խմել, մանաւանդ ճաշի ատեն, այլ շատ ուտել ըստ կարելւոյն: Որո՞ց

հաւատ ընծայել. յիրաւի ոչ միոյն և ոչ միւսոյն, զի իրենց կիրքը կը մոլորեցնէ զիրենք:

Կան փափկակազմ և հիւանդոտ ստամոքսներ որոց կծկականութիւնն (contractibilité) տկար է, այսպիսեաց համար մի քանի պատառ սննդեան հետ մեծաքանակ ըմպելի ներմուծելն՝ մարսողական գործողութիւնը խափանել է. այլ փոքր ինչ մաքուր ջուր կամ ջրախառն գինի կը բաւէ նոցա իբր կազդուրիչ:

Ընդհանրապէս, ստամոքսն որչափ նուազ հեղուկ ընդունի, այնչափ առաւել դիւրաւ կը մարսէ. նոյն իսկ, ճաշի ժամանակ որ և է ըմպելեաց բացակայութիւնն երբեմն բացորոշ պայման մը կը լինի շուտ և լաւ մարսելու:

Հարկ է նաեւ որ ըմպելեաց քանակութիւնն և տեսակը՝ կերակրոց քանակութենէն և տեսակէն կախումն ունենան: Բանջարեղինաց և մրգեղինաց հետ պարտ է խմելէ հրաժարիլ, եթէ ոչ, հակառակ պարագային մէջ, հարկ է գոնէ գրգռիչ հեղուկի մը միջոցաւ ստամոքսին զօրութիւնն արծարծել, Մսեղինաց հետ, ընդհակառակն, անհամ (fade) կամ ոգելից ըմպելեաց գործածութիւնը բարեպատեհ է:

Ջօրաւոր ստամոքսի տէր անձինք սննդական հաստատուն նիւթոց հետ անարգել կ'ըմպեն իրենց նախընտրած հեղուկներն. սակայն որչափ շատ գինի խմեն, մանաւանդ եթէ ոգելից լինի, այնքան նուազ սնունդ կ'առնուն անտի. հարկ է քիչ խմել և ըմպելեաց քանակութիւնն՝ ստամոքսին զօրութեան և ազդեցութեան յետադասել: Սկզբան տէր անձինք կան որք ոչ գինի և ոչ այլ ինչ կը խմեն, բաց ի ջրոյ, զոր իբրեւ առողջութեան միակ պահպանող կը նկատեն. բացորոշ հակառակախօսութիւն չկայ բնաւ սորա դէմ. այլ կարծեմք թէ ճշմարիտ իմաստութիւնը կը պատուիրէ ճաշակել ամենէն ալ չափաւորապէս:

Բ.



ՃԱԲՈՆ

Պատմական. — Ճաբոն, այդ ասիական Ռիտանիան, որոյ Չինական անունն՝ Յաբոն՝ կը նշանակէ Ծագող Արեգակ, երկար ժամանակ անծանօթ էր նոյն իսկ Չինաց որք այն կողմը կը դնէին իւրեանց առասպելաց կեդրոնավայրն : Զառաջին Մարքո Բօլօ ծանօթացոյց զՃաբոն Եւրոպայի, այնուհետեւ Փօրթուկալցիք և բաղմաթիւ Եւրոպացի միսիօնարք լաւ ընդունեցելովին դտան անդ. բայց կառավարութիւնը տեսնելով քրիտոնէութեան երկրին մէջ ըրած յառաջադիմութիւնն արգիլեց օտարաց մուտքն, ի բաց առեալ Հոլանտացիներն և սօքա եւս ընդ հսկողութեամբ միայն կրնային մըտնել : Միայն 1854 էն յետոյ Ամերիկացիք, Ռուսք, յետոյ Ֆրանսացիք և Անգլիացիք և այլ մի քանի տէրութիւնք առեւտրական դաշնադրութիւններ հաստատեցին Ճաբոնի կառավարութեան հետ, որով Եւրոպացւոց բացուեցան երկրին մի քանի նաւահանգիստք, ընդ որս Եօքօհամա որ այսօր կանոնաւոր հաղորդակցութիւն ունի Եւրոպայի և Ամերիկայի հետ : Բայց հակառակ դաշնադրութեանց և Ճաբոնական բաղմաթիւ դեսպանաց ներկայութեան յԵւրոպա, օտարաց դէմ գործուած ոճրաց և սպաննութեանց պատճառաւ անդ բնակութիւնը վտանգաւոր է :

Աշխարհագրական. — Ճաբոն կը գտնուի Ասիոյ Արեւելեան ծայրն և կազմուած է Խաղաղական Ովկիանոսին մէջ սփռեալ 4 մեծ, (Նիբօն, Գիուսիու, Սիքօք և Եէսօ) և բաղմաթիւ փոքր կղզիներէ : Ունի իբր 322,000 հազարամէթր քառկ. տարածութիւն և 36 - 40 միլիոն բնակիչ : Երկիրը լեռնոտ և հրաբխային է. կլիման հիւսիսային և արեւմտեան կողմերը ցուրտ, իսկ հարաւային և արեւելեան կողմերը տաք, բայց ամենուրեք՝ չոր և առողջ : Կը գտնուին ոսկի, արծաթ, լաւ պղինձ, ընտիր երկաթ, սնդիկ, կապար, անագ, ծծումբ, բորակ, հանքածուխ, հանքային ջրեր և այլն : Հողը խիստ բերրի է, լաւ մշակեալ և լաւ բնակեալ. կը հասցնէ արմտիք,

բրինձ՝ որ է ժողովրդեան սովորական ուտեստն , բանջարեղէն և պտուղներ . թէյ՝ որ Ամերիկայի մէջ խիստ յարգի է , բամբակ , մետաքս , կտնեւի , լեղակ , ծխախոտ , քափուր , ափիոն , համեմներ և այլն : Մասնաւորապէս պէտք է յիշել շերամաբուծութիւնն որ ի վաղուց անտի ծանօթ է եղած Ճաբոնի մէջ և այսօր ալ շատ զարգացած է անդ :

Կառավարութիւնն եւ կրօնք . — Կառավարութիւնը տեսակ մը կրօնական և աւատական բռնապետութիւն է . վեհապետը կը կոչուի Միքաւո , որ մինչեւ մօտ տեսնենք միայն կրօնական գլուխն էր երկրին , իսկ երկիրը կը կառավարէին Թայքուն կոչուած բանակի հրամանատարը որ ժէ . դարէն սկսեալ Զանացին բոլորովին տապալել զՄիքաւոն . ըստ սահմանադրութեան Սայիմօնեքու այն է աւատական իշխանաց հետ ի սպառ վերցուց Թայքունի իշխանութիւնն :

Կրօնքներն եւ Սինքօ կամ նախահարց դաւանութիւնն , Պոստոյականութիւն և Կոնփիւկիոսի կրօնքն :

Երկրին բանակին վիճակն , որ 1875 ին վերականգնուած է , լաւ մը ծանօթ չէ . միայն գիտեմք թէ կայ դործօն բանակ մը 30-35 հազար հոգիէ բաղկացեալ , նոյնպէս պահեստի բանակ մը և զրահաւոր շոգենաւուց փոքր տորմիլ մը :

Մայրաքաղաքն է Միաքօ կամ Քիօթօ ուր կը նստի Միքաւոն . մեծագոյն քաղաքն է Եէտօ , ուր կը նստէր Թայքունն : Միւս գլխաւոր քաղաքք եւն Եօքօհամա , Օասաքա , Նակասաքի , Հաքօտաթէ և այլն :

Բնակիչք եւ բարք . — Ճաբոնցիք Մոնկոլեան ցեղէ լինել կը կարծուին , խառն ընդ Չինական և Մալայեան ցեղք . քաջ , ճարպիկ , խրոխտ , ուսումնասէր եւն և տեղեակ Եւրոպական գիւտոց և արհեստից : Կը բանին մետաղները , իրենց լաքէ և յախճապակեայ գործուածք երեւելի են , իրենց պատկերք՝ հետաքրքրական և տպագրութիւնն որ ի հնուց ծանօթ է նոցա , ամէն տարի նորանոր հատորներով կ'օժտէ գրականութիւնն :

Երկրին գլխաւոր լեզուն է Ճաբոներէնը զոր լեզուաբանք ոմանք Ուրալ-Ալթայեան ճիւղին մէջ կը դասեն , իսկ այլք

առանձին ճիւղ մը կը համարին : Ճարտներէն ոչ սեռ ունի ոչ ալ յօդ . բայց ունի բազմաթիւ դերանուններ , զոր օրինակ 12 զանազան դերանուններ միայն Բ. դէմքին համար : Գիրն որ գաղափարական է , առած են Չինացիներէն , կը գրեն վերէն վար գուգահեռական սիւնակներով որ ալէն ձախ միմեանց կը յաջորդեն :

Ճարտական գրականութիւնն որպէս Չինականն չատ հարուստ է , բայց դեռ անծանօթ մնացած է . դիւցազներգութիւնք , պատմական և ոչխարհագրական հրատարակութիւնք , վէպք խիստ բազմաթիւ են : Ճարտնցի գեղարուեստագէտք կը զանազանին Չինացիներէն իրենց աւելի փափուկ գրչով : Թռչուններ , տունկեր , ծաղիկներ գծագրելու , անօթներ , լաքեր , կերպասներ զարդարելու մասին մեծ յարմարութիւն և ընտիր ձաշակ ունին : Իրենց տարօրինակ և անըմբռնելի մեղեդիք , զորս կը նուագեն Սաւսիւն (տեսակ մը կիթառ) , Կօրթո (քնար) և Պիվա (ջութակի տեսակ մը) կոչուած նուագարանաց վրայ , ամէն լսողաց զարմանքը գրաւած են :

Ի մի բան Ճարտնցիք արհեստից և գիտութեանց մասնաւոր յարմարութիւն ունեցող ժողովուրդ մ'են , որ չունին ոչինչ ուսանելիք Եւրոպայէն ի մասին հողագործութեան , և նոյն իսկ մի քանի արհեստից մէջ այնքան յուսալացած են զի Եւրոպա իսկ չկրնար մրցիլ նոցա հետ : Իրենց յախճապակիք , մետաքսեղէնք , պրօնզք , և լաքերն երեւելի են թէ ձեւով ու գոյնով և թէ գործուածքի մաքրութեամբ ու զարդուց գեղեցկութեամբ :

Ճարտն մին է այն երկիրներէն ուր ամենէն աւելի գիրք կը հրատարակուի . 1878-79 տարւոյն մէջ 10,000 հատոր գիրք հրատարակուած է , վէպեր և լուրջ գրուածներ , Երկիր մ'է որ ունի դիտարան , համալսարան , և կաճառ որք կանոնաւոր յարաբերութեան մէջ են Եւրոպայի նոյնօրինակ հաստատութեանց հետ : Երբ մտածեմք թէ առաջին թերթն հրատարակուած է 1871ին , պիտի զարմանանք լսելով թէ այսօր հազարաւորներ կը հրատարակուին անդ : Ի՞նչ չէ կա-

րելի յուսալ ազգէ մը որ խաղաղականի մի անկիւնն քաշ-
ուած այսպէս կ'աշխատի ինքնին :

Լ. Տ.

ԼՈՒՍԻՆ ԵՒ ԻՐ ԸՋՊԵՑՈՒԹԻՒՆՆ

ՀԻՒՍՆՊՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅ

(Շար. Գալսորդ րու. և և վերջ)

Ուղեղային և ջղային հիւանդութեանց, ինչպէս նաեւ
յանկարծակի թալկացման պարբերական ընթացքն միշտ կա-
պակցութիւն ունի լուսնոյ հետ, նոյն իսկ թալկացողք կը
կոչուին լուսնոտ. կարծես այս սոսկալի հիւանդութիւնն
լուսնէն կուգայ ի պատիժ գործուած ոճրի մը : Ըստ բժշկաց
նորագոյն վիայութեան, շատ տեսակ պարբերական գլխոյ
ցաւեր կը գէշնան լիալուսնոյ ժամանակ. նոյնպէս սեւամաղ-
ձոտ անձինք ճիշդ այդ ժամանակ անհանգստութիւն կը զգան :

Բայց նաեւ բոլորովին տարբեր հիւանդութիւնք ևս այս
տեսակ չլժանաւոր աղբեցութեան կը հպատակին : Փոփոխա-
կան ծանրաշնչութիւնք, ըստ կատարուած քննութեանց,
կը պատահին յաճախ լուսնոյ շրջանին հետ. լուսնոյ վերջին
քառորդին և լիալուսնոյ ժամանակ սրտի և փորի շատ մը
հիւանդութիւնք աւելի ծանր վիճակ մը կ'առնուն :

Նախ քան զամենայն տենդային հիւանդութիւնք են ո-
րոց մասին խիստ շատ անգամ նկատուած է լուսնոյ աղբե-
ցութիւնն, և առ այս բազմութիւ ևս տարարնակ բժշկաց
ուշադիր քննութիւնք, զորս կատարած են Եւրոպայէն
դուրս : Յրանսիզ Պալֆուր այս տեսակ ճշդագոյն գննու-
թիւններ յաճախ կատարած է երկար տարիներ յԱրեւելեան
Հնդկիս. սա գտաւ թէ գիշերահաւասարի ժամանակ, երբ
արեգակն կ'անցնի հասարակածէն, ուր լուսնոյ ձգողական
աղբեցութիւնն զօրաւորագոյն է, հիւանդութիւնք խիստ կը

բազմանան և յուրեքոյն ընթացք մը կը ստանան և մահք կը յաճախեն :

Սակայն լուսնոյ ազդեցութիւնն ապացուցուելէ յառաջ , արժան է նորա հաւանականութիւնն աւելի մօտէն քննել և հիմն խուզարկել , որպէս զի կարեւոր և ճշմարիտ պատճառի մը , կամ գոնէ ինչ որ ամենէն հաւանականն է , նորա միայն հաւատ ընծայեմք :

Եթէ ընդունիմք թէ ծովուն մակընթացութեան և տեղատուութեան պատճառն լուսնոյ ձգողական զօրութիւնն է , տարակոյս չկայ թէ արեգական ձգողական զօրութիւնն համանման արգիւնք յառաջ չբերեր : Արեգական ճառագայթից պատճառած ընդլայնումն ուստի յառաջ կուգան այն տարեւոր հողմունք և դանազան հոսանքներն օդոյ և ջրոյ մէջ և որք գիշերահաւասարից ժամանակ այնքան յաճախ փոթորիկներ կը յարուցանեն , այս և այլ բազում երեւոյթներ կ'ապացուցանեն երկնային մարմնոց ունեցած ազդեցութիւնն մեր հողագնդին վրայ , և ոչ ոք կը տարակուսի թէ գարնան՝ արեգական ուղղակի ազդեցութիւնն կը վերակենդանացնէ բուսական թագաւորութիւնն , ինչպէս աշնան՝ անուղղակի և առ ի չեղ ճառագայթներն հակառակ արդիւնք կուտան :

Ջերմաչափին բարձրանալն և իջնալն իսկ կը ցուցնեն թէ ամէն օր մթնոլորտին մէջ տատանումներ (vibration) տեղի կ'ունենան , որք երկրագնդիս թաւալման հետ և մանաւանդ նորա հետ զօդեալ երկնային մարմնոց հետ կապակցութիւն ունին :

Արդ երբ անդիկն ջերմաչափական խողովակին մէջ արեգական և լուսնոյ ձգողական զօրութեանց ազդեցութեամբ կը բարձրանայ և կ'իջնէ , չէ՞ կարելի միթէ նոյնը պատահիլ ծառոց և տունկերու խողովակաց մէջ պարունակեալ հիւթերու մասին ևս :

Խել մը երեւոյթներէ և քննութիւններէ սա հաւանական հետեւութիւնը կարելի է հանել թէ՝ այն ամէն գործարանաւոր մարմինք , որ մեր երկրագնդին վրայ կ'ապրին , ըստ

գօտիներու՝ զանազան յատկութիւններ ունին և նոցա կենաց շրջանն և գործունէութեան պայմաններն պէտք եղած համաձայնութիւնն ունին իրենց տպրած տեղւոյն տարւոյ և աւուր շրջանաց հետ :

Գալով սակայն այս տրբենակաց՝ մարդոց, մասնաւորապէս նոցա աւշին շրջաբերութեան, ջղային գրգռականութեան և դիւրագգածութեան, ինչպէս նաեւ հիւանդութեանց վրայ ունեցած ազդեցութեան, զայս մինչև այժմ տակաւին կարելի չէ եղած որոշապէս և բացարձակապէս վճռել, հաւաքեալ քննութեանց արդիւնքէն հետեւցնելով, լուսնոյ ազդեցութիւնն քնոյ, ջիւղերու և հիւանդութեանց վրայ :

Արեգական ճառագայթից բացակայութիւնն և երեկոյեան դէմ մարմնոյ գործարանաց պատահած թուլութիւնն և մեղկութիւնն՝ գիշերուան հակառակ նկատուած շատ մը հիւանդութեանց սաստկացման պատճառներն են : Այլ ամէն տենդային աճմունք երեկոյեան և գիշերուան միջոցին մասամբ իւրիք կը կասին : Բնոյ միջոցին շնչառութիւնն աւելի ծանր է, արտաշնչութիւնն սովորաբար գիշերն աւելի նուազ է : աւշին (lymphe) դիզումն ասով կ'աւելնայ, և հիւանդութեանց բազում արկածներ այս կերպիւ կը զօրանան : Այս և ուրիշ շատ մը դէպքեր, որք բոլորովին սխալ կերպիւ լուսնոյ վերագրուեալ են, արեգական ճառագայթից և նոցա ջերմութեան հեռացումէն, ցրտոյ, խոնաւութեան և գիշերային ուրիշ պարագաներէ կը պատճառին :

Իսկ գալով ընդհանրական տեղիին վրայ լուսնոյ մասնաւոր ազդեցութեան, սա յիրաւի մեր հիւսիսային գօտւոց սակ խիստ քիչ անգամ դիտուած է, բայց ասկից երբեք պէտք չէ տարակուսիլ արժանահաւատ անձանց ուրիշ գօտիներու ներքեւ կատարած քննութեանց վրայ : արեւադարձից մէջ լուսնոյ՝ արեգական առջեւ ունեցած դրից ազդեցութիւնն աւելի զօրաւոր կ'երեւի, քան թէ ի մեզ, երբ արեգակն և լուսինն միանգամայն գործեն, մանաւանդ գիշերահաւասարից կամ արեւակայից ժամանակ : Թէպէտեւ արե-

գական ունեցած զօրութիւնն՝ որ կը վարէ ծովուն խաղացքն և մթնոլորտի հոսանքն, աւելի է քան թէ լուսնինն, բայց տարակոյս չկայ թէ սա եւս բոլորց մազանման խողովակաց և կենդանեաց մէջ գտնուած հեղուկ նիւթոց վրայ կը ներգործէ :

Յորչափ կենդանին և տունկն առողջ են, այսինքն ցորչափ կենդանական զօրութեանց բովանդակ ազդեցական կարողութիւնն իւրեանց մէջ կը գործէ, ու և է արտաքին ճգնաժամական զօրութիւն անոնց վրայ չկրնար ազդել. հակառակ պարագային մէջ, երբ կենդանական զօրութիւնը տկարանան, հիւանդութեան կամ ծերութեան պատճառաւ կենդանի մարմինք ևս աննշմարելի կերպիւ անկենդան բնութեան օրինաց կը հպատակին, և այդ անկենդան մարմնոց անոնց վրայ ըրած ազդեցութիւնն յայնժամ տակաւ առ տակաւ ի յայտ կուգայ :

Այս նկատողութեամբք ըմբռնելի է և հաւանական թէ՛ հիւանդոտ անձինք մասամբ իւրեանց ջղային դրութեամբ, մասամբ աւշին դիզմամբ, կամ թէ հեղուկներուն միայն մի գործարանի վրայ ըրած յարաճուն ճնշմամբ երկնային մարմնոց ազդեցութիւնն կը կրեն, և զայդ կը նշմարեն ինքեանք ևս :

Այս ամբողջ յիշածներնէս իրաւամբ կարելի է եզրակացընել (հե՛ռի շատ մը ժողովրդային նախապաշարմանց և կարծեցեալ զննութեանց կոյր զկուրայն հաւատ ընծայելէ) թէ կայ ժամանակ, տեղ և պարագայներ՝ յորս բժիշկը պարտի լուսնոյ գիրքը նկատողութեան առնուլ, մանաւանդ գիշերահաւասարից ժամանակ քան թէ արեւակայից :

Ի Գերմանական:

Գ .



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Անօթութեան պատճառն. — Ամէն մարդ կը գտայ զայն առանց սակայն կարենալ մեկնելու անոր պատճառն, և արդարեւ գիտական աշխարհն դեռ եւս երկրայութեան մէջ է այդ մասին։ Անօթութիւնը կը վերադրուի գլխաւորաբար ստամոքսին, սակայն ի՞նչ պայմանաց մէջ։ Ստամոքսին բացարձակ դատարկութիւնն չ'է պատճառ, զի շատ անգամ երբ նախորդ կերակուրն չափաւոր եղած է և սնունդն անցնի ամբողջովին ստամոքսէն աղիքն՝ անօթութիւնն անմիջապէս զգալի չըլլար։ Անօթութիւնն չկրնար լինել արդիւնք ստամոքսային ճիւրոյց (suc gastrique) ազդեցութեան, զի այդ հեղուկ այն ատեն միայն ստամոքսին մէջ կը ծորէ երբ ստամոքսն կերակրովք գրգռուի։ Մասամբ կարելի է վերագրել ստամոքսի ներքին գեղձիկներուն ձգտման՝ արտադրեալ հիւթոյն պատճառաւ, սակայն ցարդ հաստատուած չէ որ ստամոքսային հիւթն կը գոյանայ պէտք չեղած ատեն։ Բաց աստի փորձով տեսնուած է թէ մտային յուզում մը կրնայ ամենէն սաստիկ ախորժակն անցնել, և դժուար է երեւակայել թէ այս ի՞նչպէս առիթ կը լինի գեղձիկներուն պարպուելուն։ Գիտեմք նաեւ թէ երբ ստամոքսն պարապ ըլլայ, կը կծկի, և թերեւս այս է պատճառն անօթութեան, զի եթէ որ և է անգործարանաւոր մարմին, որ չկրնար մարսուիլ, մտցնեմք մեր ստամոքսին մէջ, անօթութիւնն կ'անհետի պահ մը։ Այսու հանդերձ ամենէն հաւանական տեսութիւնն՝ արեան դէպի ստամոքսն դիմելն է ի պատրաստութիւն ստամոքսային հիւթոյն։ Այս է պատճառն անօթութեան ըրած տպաւորութիւնն ջղաց վրայ և մտային յուզմամբ որ մեծ ազդեցութիւն ունի արեան ամենանուրբ խորշերն ըրած շրջանին վրայ, անօթութեան անհետելուն։



Անօթութեան պատճառն է։







